ՎԱՍՍՖ, XVIII ԴԱՐ

«Թարիխի-Վասսֆի» հեղինակը, Ռեիս-ուլ-Քյութթաբ՝ Բաղդադ-լի-Ահմեդ էֆենդին, թուրք պատմագրության մեջ հայտնի է Վասսֆ անունով։ Ծննդյան թվականը հայտնի չէ*, մեռել է 1221 թ. (1806)։ Վասսֆը, իբրև Ռեիս-ուլ-Քյութթաբ, հասել է պետական բարձր աստիճանի**։ Նա չորս անգամ պատմագիր-տարեգիր է նշանակվել և գրել է Օսմանյան պետության պատմությունը 1168 թ. մինչև 1188 թ. (1755—1788) և 1203 թ. մինչև 1209 թ. (1788—1794) այսինքն 26 տարվա պատմություն։ Երրև տարեգիր («Վակաանյուվիս») 19-րդ տեղն է բռնում։ Վասսֆի պատմության առաջին մասը (1168—1188) հասնում է մինչև այն թվականը, որից հետո շարունակում է հայտնի թուրք պատմագիր Ջեվդեթ-Փաշան՝ իր 12 հատորից բաղկացած «Թարիխի Ջեվդեթով»։

Թուրքական տարեգիրներից Ջեշմի-Զադե-էֆենդիի (մեռել է 1184 թ.), Մուսա-Զադեի (մեռել է 1186 թ.) և Բեհջեթի էֆենդիի գրի առած պատմությունները (փոքր չափով) փոխանցվել են Վասսֆին։ Այդ երևույթը, այսինքն պատմության որոշ նյութերի փոխանցումը, հաճախ է կրկնվում թուրք պատմագրության մեջ։

Վասսֆը, իր «Պատմության» I հատորի առաջաբանում այդ մասին հիշում է և ասում, որ ինքը ստիպված է եղել իր նախորդների գրի առած պատմությունները, բովանդակության և լեզվի տեսակետից վերանայել, ստուգել և լրացնել։ Սրանով Վասսֆը կազմել

---

* Թուրք պատմագիրների և առհասարակ գրականագետների և պետական բարձր պաշտոնյաների ծննդյան թվականը հաճախ նկատի չի առնվում. հիշվում է միայն մահվան թվականը։

** Վարել է մի շարք կարևոր պետական-դիվանագիտական պաշտոններ՝ 1186 թ. (1772) Խուխարեստում թուրք-ռուսական խաղաղության կոնֆերենցիայում թուրքական պատգամավորության քարտուղարի պաշտոնը, 1203 թ. (1788) մասնակցել է Մադրիդի Արտակարգ միսիային, 1206 թ. (1791) ռուս-թուրքական խաղաղության պայմանների բանակցությանը, 1220 թ. նշանակվել է Ռեիս-էֆենդի և այլն։

Յ. իր պատմության I հատորը։ Առաջաբանում նա ասում է, որ այդ հատորին իբրև հավելված Էնվերի-Էֆենդիի գրի առած դեպքերը նորից ստուգել և շարադրել է և այդ կերպով 1183 թ. սկսած իբրև «Վակաա-Նյուվիս» կազմել իր «Պատմության» II հատորը։ Վասըֆիի իբրև տարեգրի, պաշտոնի ընդմիջումները բացատրվում են նրա այլ պետական պաշտոնների նշանակումով։ Թուրք պատմագիր-տարեգիրների շարքում Վասըֆը գրավում է կարևոր տեղ։ Նրա լեզուն բավականին խրթին է, պատմությունը՝ տարեգրային։ Մեր ձեռքի տակ եղած «Վասըֆի պատմությունը» տպագրված է Ստամբուլում 1243 թ. (1827)։ Վասըֆն էլ ինչպես թուրք պատմագիրների մեծ մասը, մանրամասնորեն զբաղվում է Օսմանյան պետության եվրոպական մասի դեպքերով, գլխավորապես պատերազմական գործողություններով և շատ քիչ ուշադրություն է դարձնում Արևելքին՝ Անադոլուին։

Վասըֆից թարգմանում ենք մի քանի նյութեր, որոնք որոշ չափով կապված են Անդրկովկասի ժողովուրդների՝ հայերի և վրացիների և կովկասյան այլ ազգությունների պատմության հետ։

«ԹԱՐԻԽԻ ՎԱՍԸՖ» تاريخ واصف

1171 թվականի (1757) դեպքերից

Ռայաների հագուստի կանոնը

Ստամբուլում տպրող հույն, հայ և հրեա ցեղերը (թայֆաները) իրենց հագուստներով անցել էին շարիաթի սահմանը (կարգը խանգարել էին)։ Այս պատճառով հույն և հայ պատրիարքները և հրեա ցեղի հասարակական պետերը հրավիրվեցին Ջավուշ-Բաշի-Աղայի[2] օդան[3] և նրանց հայտնվեց առաջվա նման հագուստները կարգի բերելու մասին տրված փադիշահական բարձր հրամանը. միաժամանակ հայտնվեց, որ այդ կարգի խանգարումը ենթակա է խիստ պատժի։

1172 թվականի (1758) դեպքերից

Սվազի և Էրզրումի էյալեթների լեզգիների մասին տրված պաշտոնը

Լեզգի ցեղը, չնայած որ իսլամական ժողովրդից էր, սակայն ո՛չ Օսմանյան կառավարությանն էր հպատակություն ցույց տալիս և ո՛չ էլ սահմանակից Իրանին։ Մշտապես անհնազանդ դրության